Հոգաբարձուների ընտրութիւնը Բարձրագոյն Հոգևոր Իշխանութիւնը հաւատացել է ժողովրդին այն ցանկալի յուսով, թէ ժողովուրդը այդ պաշտօնի համար կընտրէ իւր միջից արժանաւորներին, որպէս զի նոքա արժանանան հաստատութեան։

---

# ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Ըստ Բարձր հրամանի Սրբազնագոյն Կաթուղիկոսի ամենայն Հայոց Թոյլատրի ամենայն վարչութեանց եկեղեցական—ծխական օրիորդական ուսումնարանաց մերոց «Հայկական նշանագրեր և ծաղկագրեր ձեռագործի համար» անուանեալ տետրակն՝ յօրինեալն ի Վարդանայ Ստեփանեան Վարդանեանց ի գործ ածել իբրև գործնական ձեռագործի։

---

Պ. Բ. Տէր Մկրտիչեանցը գրում է Դուշչի Բիլակ գիւղից, որ Կոտեվազու վանքում հանդիպել է երկրաչափ պ. Յովհաննէս Իսահակեանցին, որ նկատելով վանքի կիսաւեր կաթուղիկէն, նուիրել է նորա նորոգութեան համար 10 ռուբլի։ Այլ ուխտաւորք ևս նորա յորդորանօք հետևել են նորա օրինակին և նուէրներ տուել նոյն նպատակի համար, որով կազմուել է 64 ռ. 40 կոպ. գումար։

---

## ՀԱՄԱՌՕՏ

Հաշիւ ելից և մտից եկեղեցական— ծխական երկսեռ ուսումնարանաց Հայոց Մօզդոկայ, յընթացս $18^{89}/_{90}$ ուսումնական շրջանի.

### ՄՈՒՏՔ

| | Ր. | Կ. |
|---|---|---|
| Առձեռն դրամ, անցեալ $18^{88}/_{89}$ ուսումնական շրջանից մնացած . . . . . . . | 113 | 31 |
| Քաղաքի երեք եկեղեցիներից՝ ի պահպանութիւն ուսումնարանաց | 2100 | |

37

| | | |
|---|---|---|
| Գանձանակագրամ . . . . . . | 81 | 10 |
| Աշակերտելոց Թոշակագրամ . . . . . | 134 | |
| Ծախուած դասագրքերից . . . . . | 61 | 44 |
| Մուտք Թատրոնական դահլիճից . . . . | 60 | |
| Ծախուած ձեռագործներից . . . . | 48 | 83 |
| Նուէր Թատրոնասէրներից և Պ. Աջէմեանից . . | 77 | 44 |
| Ժողովրդականաց կամաւոր տուրք . . . . | 254 | |
| Դրամագլխի տոկոս . . . . . . | 188 | 50 |
| Ուսումնարանների դրամագլուխ (տոկոսաբեր արժէտոմսեր) | 4083 | 7 |
| Գումար | 7201 | 29 |

## ԾԱԽՔ

| | | |
|---|---|---|
| Ուսուցիչների տարեկան ռոճիկը . . . . | 1972 | |
| Ուսուցիչներին ճանապարհածախք . . . . | 120 | |
| Ուսուցիչներ հրաւիրելու համար տուած հեռագիրներին | 48 | 85 |
| Երկու ծառայի տարեկան ռոճիկ . . . . | 192 | |
| Տասն և հինգ ու կէս սաժէն վառելափայտին և սղոցելուն . | 280 | 80 |
| Տասն երկուս և կէս փութ նաւթի . . . . | 20 | |
| Երկու հատ պատի ժամացոյցերին . . . . | 22 | 60 |
| Պատուիրած դասագրքերին . . . . . | 82 | 60 |
| Ձեռագործի նիւթերին . . . . . | 20 | |
| Վկայագրերի, վկայականների և մատեանների տպագրութեանը | 30 | 95 |
| Ուսումնարանների զանազան խանութներում անցեալ տարուանից ունեցած պարտքը . . . . . | 37 | 61 |
| Դասական պիտոյքներին.— Թղթին, մատին, Թանաքին, տետրերին և այլն մանր իրեղէններին . . . | 142 | 14 |
| Յունիս, Յուլիս և Օգոստոս ամիսների համար, գանձապահին յանձնուած առձեռն ծախսելիք դրամ . . . | 50 | |
| Գումար | 3019 | 55 |

7201 ռուբլի 29 կոպէկ մուտքից հանելով 3019 ռուբլի 55 կոպէկ ծախսը, դրամագլխով հանդերձ կմնայ 4181 ռուբլի 74 կոպէկ, որից ևս հանելով 4083 ռուբլի 7 կոպ. դրամագլուխը, առ 1-ն Սեպտեմբերի 1890 ամի, կամ $18^{90}/_{91}$ ուսումնական շրջանի կմնայ առ ձեռն դրամ 98 ռուբ. 67 կոպէկ.

Սոյն հաշիւը մանրամասնաբար քննելով հոգաբարձութիւնը. հիմնուելով բերած վկայութիւների և ստորագրութիւնների վերայ ըստ ամենայնի ճիշտ և անսխալ գտնելով ընդունեց.

Նախագահ հոգաբարձութեան՝ Թադէոս աւագ. քահանայ Խոսրովեանց

Անդամ հոգաբարձութեան եւ գանձապահ՝ Մկրտիչ Կաժիւնիկեանց

---

## ՀԱՇԻՒ

Ելից և մուից դրամոց եկեղեցական—ծխական երկդասեան երկսեռ ուսումնարանաց Հայոց Նոր—Բայեազիդ քաղաքի վասն $18^{89}/_{90}$ ուսում. տարւոյ:

### ՄՈՒՏՔ

Սկսեալ է 22 Յուլիսի 1889 թ. ց 9-ն Օգոստոսի 1889 թուի:

| | Ր. | Կ. |
|---|---|---|
| Անցեալ $188^{8}/_{9}$ ուսում. տար. աւելացած գումարը . | 85 | 98 |
| Աշակերտների և աշակերտուհիների թօշակը . . . | 781 | |
| Ուսումնարանապատկան կրպակների վարձը . . | 300 | |
| Դրամագլխի տոկոսը . . . . . . | 108 | |
| Մոմավաճառութեան կապալադրամը . . . . | 646 | 66 |
| Պսակատէրերից նուէրներ . . . . . | 326 | 80 |
| Ս. Աստուածածին եկեղեցու արդիւնքից . . . | 50 | |
| Նոյնը և Ս. Կարապետ եկեղեցեաց մասանց տանից . . | 97 | 95 |
| Թատրոնական ներկայացումներից և պարահանդէսից . | 95 | 91 |
| Նուէրներ մանր մուտք . . . . . . | 63 | 72 |
| Գումար | 2556 | 2 |

### ԵԼՔ

| | | |
|---|---|---|
| Հինգ ուսուցչի և 1 վարժուհու ռոճիկ . . . | 1905 | |
| Տուներին վարձ . . . . . . . | 127 | |
| Շինութեան վրայ . . . . . . . | 106 | 73 |
| Նստարաններ, սեղաններ, աթոռներ, գրքեր և բլանկներ . | 131 | 20 |
| Վառելիքի . . . . . . . . | 77 | 73 |
| Ձեռագործի նիւթեղէն և մանրածախք . . . . | 121 | 97 |